ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՄԱԿ զարգացման ծրագրի օժանդակությամբ «COVID-19 և կայունություն Հայաստանում. Մեղմացնելով սոցիալ-տնտեսական ազդեցությունը խոցելի մարդկանց և համայնքների վրա, #00122446» ծրագրի շրջանակներում

EmployeeProtect.am առցանց հարթակի ստեղծման

11 հոկտեմբեր 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեխնիկական առաջարկի նպատակ. 3
2. Տեխնիկական առաջարկի նկարագրություն. 3
3. Գաղտնիության ապահովության տեխնիկական ստանդարտներ. 5
4. Հայտի ներկայացման տեխնիկական կառուցակարգ. 6
5. Հայտի կարգավիճակի վերաբերյալ տեխնիկական կառուցակարգ 7
6. Ինչպես թաքցնել ձեր սարքի IP հասցեն 9
7. Հարթակի այլ պահանջներ 9
8. ժամանակացույց 10
9. Հարթակի կառուցվածք և գործունեության շրջանակ 10
10. Ավարտական դրույթներ 24

1. Տեխնիկական առաջարկի նպատակ.

Տեխնիկական առաջարկի նպատակն է ստեղծել, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի սերվերում տեղայնացնել և գործարկել նորարական տեղեկատվական EmployeeProtect.am առցանց հարթակը՝

- աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ անանուն դիմումների գրանցման, ընդունման, քննման համար,
- աշխատողների իրավունքների իրազեկման համար,
- աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների ներկայացման և դրանց հիման վրա փաստարկված բարեփոխումների իրականացման համար:

2. Տեխնիկական առաջարկի նկարագրություն.

Սույն տեխնիկական առաջադրանքի շրջանակներում ստեղծվելու է իրավունքների պաշտպանության առցանց հարթակը: Այն պետք է լինի եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) և տեղադրվելու է www.employeeprotect.am հասցեում:

EmployeeProtect.am աշխատողների իրավունքների պաշտպանության առցանց հարթակը պետք է բաղկացած լինի հետևյալ բովանդակային բաղադրիչներից.

- *EmployeeProtect.am վեբ կայքից,*
- *IOS-ի համար բջջային հավելվածից,*
- *Android-ի համար բջջային հավելվածից:*

Կայքն ու բջջային հավելվածները իրենց ոճով և կառուցվածքով լինելու է պարզ և հասանելի բոլոր օգտատերերի համար: Կայքն ունենալու է Responsive Design, այսինքն ամբողջական ինֆորմացիան հասանելի է լինելու: Սմարթֆոնով՝ առանց բջջայինի հավելվածի, կայք մուտք գործելու դեպքում կայքի տեսքը հարկավոր է, որ լինի օպտիմալացված և առավել հարմարավետ օգտատերերի համար:

Հարթակի պատրաստման համար պետք է օգտագործվեն ժամանակակից ծրագրային լուծումներ /HTML5, CSS3, PHP (Yii2 կամ Code Igniter 4 ֆրեյմվորկների վրա հիմնված), MySQL և այլն/, որոնք արդիական տեսք ու օգտագործման հեշտ միջոցներ կապահովեն ինչպես այցելուներին, այնպես էլ կայքի ադմինիստրատորներին:

Հարթակի ձևավորումը պետք է լինի այնպիսին, որ միաձև դիտվի ցանկացած ժամանակակից մոնիտորների վրա:

Հարթակը պետք է լինի օպտիմալացված՝ որոնողական համակարգերի հետ աշխատելու համար, ինչի համար բոլոր էջերը պետք է հագեցած լինեն համապատասխան թեգերով և մետա-թեգերով /tags, meta-tags/, գեներացված լինի XML-sitemap և իրականացված լինեն որոնողական օպտիմալացման այլ միջոցներ:

Հարթակի ադմինիստրատիվ մասը պետք է ապահովված լինի անվտանգության HTTPS պրոտոկոլով:

Ադմինիստրատիվ մասը պետք է հագեցած լինի լիարժեք քանակությամբ գործիքներով, որոնք հնարավորություն կտան պատվիրատուին կառավարել բովանդակությունը՝ տեքստային, գույնային, չափսային փոփոխություն, աղյուսակների, նկարների և տեսահոլովակների ներմուծում, բովանդակության հավասարեցում, հղումների կցում և այլ մատչելի գործիքներ: Ինչպես նաև պետք է ունենա էջերի կոդային փոփոխության տիրույթ /HTML source code editing/:

Ադմինիտրատիվ բաժնում պետք է հնարավորություն լինի էջերը կամ ֆայլերը դասակարգել ըստ այբբենական կարգի, ըստ ֆայլի չափսի կամ ըստ ֆայլը բացելու/փոփոխելու ժամանակացույցի:

Ադմինիստրատիվ մասում պետք է լինի մուտքային անվան և գաղտնաբառի փոփոխության հնարավորություն, օգտատեր ավելացնել/հեռացնելու և ադմինիստրատիվ տիրույթում նրանց տարբեր մակարդակների իրավունքներ տալու հնարավորություն:

Հարթակի ցանկացած մակարդակում պետք է հնարավորություն լինի ավելացնել/պակասեցնել ցանկացած տիպի և քանակության էջ: Էջ ջնջել, խմբագրել կամ թաքցնել:

Բոլոր էջերում տեղադրվող տեղեկատվությունը պետք է դասավորված լինի ըստ տեղադրման, կամ նշված ամսաթվի ժամանակացույցի /նորից - հին/, վերևի մասում լինի տեղեկատվության ամսաթիվը:

Հարթակի բովանդակային մասը և հիմնական նկարներն ու տեսահոլովակները տրամադրում է պատվիրատուն՝ էլեկտրոնային տարբերակով: Տեսահոլովակները պետք է հնարավորություն լինի դիտելու անմիջապես կայքի վրայից և կարող են տեղադրված լինել ինչպես կայքի տիրույթում, այնպես ել Youtube –ում Պատվիրատուի պաշտոնական էջում:

Բոլոր գրաֆիկական էլեմենտները պետք է լինեն եզակի, ստեղծված կատարողի կողմից այս նախագծի համար կամ տրամադրված պատվիրատուի կողմից: Ինտերնետում ազատ տարածվող գրաֆիկական ֆայլեր օգտագործել չի թույլատրվում:

Հարթակը պետք է լիարժեք աշխատի առնվազն Google Chrome, Firefox, Microsoft Edge, Safari արդիական բրաուզերներում:

3. Գաղտնիության ապահովության տեխնիկական ստանդարտներ.

EmployeeProtect.am աշխատողների պաշտպանության առցանց հարթակին դիմում, բողոք, առաջարկ, ահազանգ (այսուհետ՝ հայտ) ներկայացրած անձի գաղտնիությունը պահպանվում *է:* EmployeeProtect.am աշխատողների պաշտպանության առցանց հարթակի միջոցով հայտատու անձին պետք է երկու հնարավորությունների տարբերակներ առաջարկել.

ա/ հայտ ներկայացնել Tor ինտերնետ-բրաուզերի միջոցով, այսպիսով՝ թաքցնելով իր IP հասցեն,

բ/ հայտ ներկայացնել սովորական ինտերնետ-բրաուզերի միջոցով, այսպիսով՝ չթաքցնելով իր IP հասցեն:

Վերոնշյալ երկու դեպքում էլ հայտ ներկայացնող անձը պետք է, իր հայեցողությամբ, հնարավորություն ունենա.

ա/ ընտրել անանուն մնալու տարբերակը,

բ/ նշել իր անունը և կոնտակտային տվյալները:

Սակայն, գաղտնիության առավել պաշտպանություն ստանալու նպատակով անհրաժեշտ է հայտը ներկայացնել էջի միջոցով, որը հասանելի չէ ստանդարտ ինտերնետ-բրաուզերով, այլ հասանելի է բացառապես Tor ինտերնետ-բրաուզերի միջոցով, որը ստեղծված է երրորդ անձանցից պաշտպանության նպատակով: Tor-ը քողարկում է հայտատուի IP հասցեն և կոդավորում է տվյալները: Tor Ինտերնետ-բրաուզերը անվճար է և հասանելի յուրաքանչյուրին:
Հետևաբար, EmployeeProtect.am աշխատողների պաշտպանության առցանց հարթակը հայտ ներկայացնողների պետք է խորհուրդ տա օգտվել Tor ինտերնետ-բրաուզերից:
Ստանդարտ ինտերնետ-բրաուզերով հայտը ներկայացնելու դեպքում գաղտնիությունը ևս պահպանվում է, տեղի է ունենում տվյալների կոդավորում:

Այն դեպքում, նույնիսկ եթե անձը դիմել է անանուն կերպով Tor ինտերնետ-բրաուզեր միջոցով, այդ դեպքում նույնպես EmployeeProtect.am աշխատողների պաշտպանության առցանց հարթակում պետք է հնարավորություն ընձեռնվի պատասխանել նրա հայտին և, այսպիսով, սկսել քննարկում: Սա կարևոր է, քանի որ հետագա մանրամասներ կամ փաստաթղթեր են պահանջվելու՝ որպես ապացույց, և ժամանակի ընթացքում առցանց հարթակը պետք է ձեռք

բերի հայտ ներկայացրած անձի վստահությունը, որի հետևանքով էլ հետագայում հայտ ներկայացրած անձը պատրաստ կլինի բացահայտել իր անձը:

Անվտանգության այլ ցանկալի առանձնահատկություններից պետք է լինի նախապես սահմանված ժամանակահատվածի ավարտին սերվերից գաղտնի տեղեկատվության ավտոմատ կերպով ջնջումը և տվյալների կոդավորումը, որը հնարավոր չէ գաղտնալսել այդ պահին կամ սերվերում, և կարելի է միայն ապակոդավորել նախագծի լիազորված անձնակազմի կողմից:

EmployeeProtect.am աշխատողների պաշտպանության առցանց հարթակից օգտվողները պետք է տեղեկացված լինեն, որ հանցագործության կամ հավանական հանցագործության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն պետք է ներկայացվի իրավապահ մարմիններին: Հետևաբար, պետք է ունենալ ուղեցույց, որը կօգնի օգտվողին հարցաթերթիկ լրացնելու հարցում:

Համաձայն ազդարարման վերաբերյալ օրենսդրության՝ եթե հայտ ներկայացնողը մեղադրանք է ներկայացնում անկեղծորեն, նա պաշտպանված է անվանարկման գործընթացից, ինչպես նաև պաշտպանված է իր գործատուի կողմից ցուցաբերվող անարդար վերաբերմունքից (այն է՝ եթե ընկերության կամ պետական կազմակերպության աշխատողը սխալ գործելակերպի վերաբերյալ մեղադրանք է ներկայացնում): Առցանց հարթակը պետք է պարզ տեղեկատվություն հաղորդի հայտ ներկայացնողների հավանական իրավական պատասխանատվության վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

4. Հայտի ներկայացման տեխնիկական կառուցակարգ.

EmployeeProtect.am աշխատողների իրավունքների պաշտպանության առցանց հարթակ հայտի ներկայացումը պետք է բաղկացած լինի 4 քայլից.

Քայլ 1-ը աշխատանքային իրավունքների խախտման խնդրի վերաբերյալ ընդհանուր բնույթի տեղեկատվության տրամադրում է, որը ներառում է ընդհանրական տեղեկատվություն այն մասին, թե խնդիրը որ ոլորտին է վերաբերվում, ի՞նչ է պատահել, որտեղ է պատահել, երբ է պատահել և այլն: Առաջին քայլում պահանջվելիք տեղեկատվության լրացումը բավարար է հայտը ավարտելու և ներկայացնելու համար: Սակայն, հնարավոր է շարունակել դեպի Քայլ 2 և առավել մանրամասն տեղեկություններ ներկայացնել աշխատանքային խախտման վերբերյալ խնդրի վայրի, ժամի մասին, ինչպես նաև այն մասին, թե հայտ ներկայացնող անձը ինչպես է տեղեկացել խնդրի մասին և այլն: Այս փուլում ևս հնարավոր է հայտը ավարտել և ներկայացնել: Սակայն, հնարավոր է շարունակել դեպքի Քայլ 3 և կցել ապացույցներ, օրինակ՝ լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ և այլն: Այս փուլում ևս հնարավոր է հայտը ավարտել և

ներկայացնել: Սակայն, ցանկության դեպքում հնարավոր է շարունակել դեպի Քայլ 4, լրացնել անձնական տվյալները և ներկայացնել հայտը:

Քայլ 2-ը աշխատանքային իրավունքների խախտման խնդրի վերաբերյալ լրացուցիչ՝ մանրամասն տեղեկատվության տրամադրում է, որը ներառում է մանրամասն տեղեկություններ ներկայացնել աշխատանքային իրավունքների խախտման խնդրի վայրի, ժամի մասին, ինչպես նաև այն մասին, թե հայտ ներկայացնող անձը ինչպես է տեղեկացել խնդրի մասին և այլն: Երկրորդ քայլում պահանջվելիք տեղեկատվության տրամադրումը (լրացումը) բավարար է հայտը ավարտելու և ներկայացնելու համար: Սակայն, հնարավոր է շարունակել դեպի հաջորդ քայլեր, կցել փաստաթղթեր և (կամ) տրամադրել անձնական տվյալներ:

Քայլ 3-ը աշխատանքային իրավունքների խախտման խնդրի վերաբերյալ վերաբերյալ ապացուցողական բնույթ ունեցող հավելվածների՝ փաստաթղթերի և կրիչների տրամադրումն է (լուսանկար, տեսանյութ, ձայնագրություն և այլն) տրամադրել անձնական տվյալներ: Հնարավոր է կցել առավելագույնը 10 նկար, որոնց առավելագույն չափը չպետք է գերազանցի 25MB-ը, 1 տեսանյութ և 1 ձայնագրություն, որոնցից յուրաքանչյուրի առավելագույն չափը չպետք է գերազանցի 200 MB-ը: Երրորդ քայլում հավելվածի տրամադրումը բավարար է հայտը ավարտելու և ներկայացնելու համար: Սակայն, հնարավոր է շարունակել դեպի հաջորդ քայլ և տրամադրել անձնական տվյալներ:

Քայլ 4-ը աշխատանքային իրավունքների խախտման խնդրի վերաբերյալ հայտ ներկայացրած անձի կողմից անձնական տվյալների տրամադրումն է: Սա հայտ ներկայացնող անձի իրավունքն է, սակայն վերջինս պարտավոր է գիտակցել, որ անձնական տվյալները ներկայացնելու դեպքում վերջինս կարող է ներգրավվել իրավական գործընթացների մեջ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպերում, կարգով և ժամկետներում:

Չորրորդ քայլում անձնական տվյալների տրամադրումով հայտի լրացումը ավարտվում է և այն կարելի է ներկայացնել: Սակայն, հնարավոր է հետ վերադառնալ և ստուգել լրացրած տվյալները:

5. Հայտի կարգավիճակի վերաբերյալ տեխնիկական կառուցակարգ

Ստուգել հայտի կարգավիճակը

Ձեր հայտը ներկայացնելուց հետո, Դուք ստացել եք ծածկագիր, որը պետք է օգտագործել հայտի կարգավիճակը ստուգելու նպատակով: Հորդորում ենք գաղտնի պահել այդ ծածկագիրը:

Հայտը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կարող եք ստուգել հայտի կարգավիճակը, որով կպարզվի, արդյո՞ք Ձեր հայտը մերժվել է, թե՝ ոչ: Անհրաժեշտ է այստեղ մուտքագրել Ձեր ծածկագիրը: Հետագա տեղեկատվություն ստանալու նպատակով խորհուրդ է տրվում պարբերաբար այն ստուգել, քանի որ կախված գործի բնույթից և բարդության աստիճանից, կարող են լինել տարբեր ժամկետներ:

Ձեր հայտի կարգավիճակն է.

Ձեզ պարբերաբար կներկայացվի տեղեկատվություն այն մասին, թե որ փուլում է գտնվում Ձեր կողմից ներկայացված հայտը, մասնավորապես տվյալ գործով դրական կամ բացասական պատասխանել է ներկայացրել, իսկ քրեորեն հետապնդելի արարք պարունակելու դեպքում՝ ներկայացվել է իրավապահ մարմնին, իրավապահ մարմինն իր նախաձեռնությամբ գործ է հարուցել և այլն:

Եթե Դուք հայտը ներկայացնելիս լրացրել եք միայն պարտադիր բնույթի տեղեկատվությունը և ցանկանում եք ավելացնել լրացուցիչ տեղեկատվություն, ապա այդ հնարավորությունը կունենաք հայտի կարգավիճակը ստուգելիս ձեր ծածկագրով մուտք գործելու ժամանակ: Եթե ցանկանում եք նոր ապացույց կցել, ապա անհրաժեշտ է կրկին հայտ ներկայացնել՝ ընդհանուր ընթացակարգով:

Մեր աշխատողների կողմից ձեր հայտի վերաբերյալ հարցերի առաջացման դեպքում ձեզ հետ կպաշտպանվի նաև ակտիվ բնույթ կրող հետադարձ կապ և այս բաժնում ձեզ կուղղվեն հարցեր, որոնց դուք հնարավորություն կունենաք պատասխանել: Գաղտնիության պահանջները այս փուլում ևս պահպանվում են:

Բացի այդ, միևնույն գործատուի, միևնույն ոլորտի, միևնույն գործունեության վայրի կամ միևնույն պաշտոնատար անձի վերաբերյալ որոշակի թվով հայտեր ստանալու դեպքում, վերջիններիս լուծման նպատակով, անհրաժեշտության դեպքում կհատկորոշվեն նաև փաստարկված բարեփոխումներ:

Ցանկանում ենք նաև տեղեկացնել, որ Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը դրանք ներկայացնելուց հետո 60 օրյա ժամկետում ավտոմատ կերպով կջնջվի սույն հարթակից, հետևաբար Դուք ժամկետի ավարտից հետո այլևս հնարավորություն չեք ունենա մուտք գործել հարթակի սույն բաժին:

Հնարավոր տարբերակներ՝

- Ցավում ենք, սակայն Ձեր հայտը մերժվել է: Աշխատանքային իրավունքների խախտումների դեպքում կարող եք կրկին հայտ ներկայացնել:

- Շնորհավորում ենք, Ձեր հայտը ընդունված է: Հետագա տեղեկատվություն ստանալու նպատակով խնդրում ենք պարբերաբար այն ստուգել:
- Ձեր հայտը կապակցությամբ ԱԱՏՄ-ում հարուցվել է վարչական վարույթ և իրականացվում քննություն:
- ԱԱՏՄ-ում հարուցված վարչական վարույթի քննությունը ավարտվել է և Ձեր հայտը բավարարվել է:
- ԱԱՏՄ-ում հարուցված վարչական վարույթի քննությունը ավարտվել է և Ձեր հայտը մերժվել է:
- Քանի որ Ձեր կողմից բարձրացված հարցում առկա էր քրեորեն հետապնդելի արարք, հետևաբար այն ներկայացվել է իրավապահ մարմնին:
- Իրավապահ մարմինն իր նախաձեռնությամբ գործ է հարուցել:
- Այլ տարբերակներ մուտք անելու հնարավորություն:

6. Ինչպես թաքցնել ձեր սարքի IP հասցեն

Գոյություն ունեն սարքի IP հասցեն թաքցնելու բազմաթիվ եղանակներ՝ կախված օգտագործած օպերացիոն համակարգից: Պետք է ներկայացներ Tor և այլ browser-ներ, որոնք կթաքցնեն սարքի IP հասցեն՝

- համակարգչով մուտք գործելու դեպքում.
- iOS և Android օպերացիոն համակարգերով մուտք գործելու դեպքում.
- բջջային հավելվածների օգտագործման դեպքում:

7. Հարթակի այլ պահանջներ

- *Հարթակի դիզայնի մշակում՝ ըստ սույն տեխնիկական առաջադրանքի դրույթների և պատվիրատուի ուղղորդմամբ,*
- *Հարթակի բովանդակության մշակում՝ ըստ սույն տեխնիկական առաջադրանքի դրույթների և պատվիրատուի ուղղորդմամբ,*
- *Կայքում նախատեսվում է նաև՝ բովանդակության կառավարման համակարգ (CMS) և վիճակագրության հաշվիչ (Google Analytics),*

- *Անվտանգությունն ապահովելու նպատակով հարկավոր է https անվտանգության սերտիֆիկատ, ինչպես նաև հաճախորդների հայտին վերաբերող բոլոր տվյալները պետք է պահպանվեն միայն կոդավորված վիճակում:*
- *Հարթակի այցելությունները բարելավելու համար կօգտագործվեն SEO (Search engine optimization) անհրաժեշտ ստանդարտները,*
- *Կայքը և բջջային հավելվածները պետք է լինեն բազմալեզու*
- *Բջջային հավելվածների դեպքում, բացի տեքստային դիմումներից, պետք է հնարավոր լինի ձայնագրել և ուղարկել ձայնային հաղորդագրություններ, որոնք ևս պետք է ուղարկվեն և պահպանվեն կոդավորված տարբերակով*

Նմանատիպ կայք, որը կարող է օգնել հարթակի կոնտենտը և կառուցվածքը օպտիմալացնելու համար՝

- https://www.bizprotect.am/

8. ժամանակացույց

Մրցույթի հայտարարում	12.11.2020
Առաջարկությունների ընդունում և հաղթող ընկերության որոշում	22.11.2020
Նախնական վիճակում գտնվող EmployeeProtect.am վեբ կայք, որը պատրաստ է շահագործման	Մինչև 20.12.2020
Վերջնական վիճակում գտնվող EmployeeProtect.am վեբ կայք	Մինչև 25.12.2020
Նախնական վիճակում գտնվող IOS-ի և Android-ի համար բջջային հավելվածներ	Մինչև 10.02.2021
Վերջնական վիճակում գտնվող IOS-ի և Android-ի համար բջջային հավելվածներ	Մինչև 15.02.2021

9. Հարթակի կառուցվածք և գործունեության շրջանակ

EmployeeProtect.am աշխատողների իրավունքների պաշտպանության առցանց հարթակի կառուցվածքն է.

1. Գլխավոր
2. Հարթակի մասին
3. ՀՏՀ
4. Նորություններ
5. Հաջողության պատմություններ
6. Հետադարձ կապ
7. Հայերեն/անգլերեն
8. Ներկայացնել հայտ
9. Ստուգել հայտի կարգավիճակը

1. Գլխավոր էջ.

Վերևի հատված.

Խորհրդանիշ՝ ԱԱՏՄ-ի կամ Հարթակի	Աշխատանքային իրավունքների պաշտպան	Հայերեն/անգլերեն

Նույն գծի վրա կամ մի փոքր ներքև.

Գլխավոր	Հարթակի մասին	ՀՏՀ	Նորություններ	Հաջողության պատմություններ	Վիճակագրություն	Հետադարձ կապ	Ներկայացնել հայտ	Ստուգել հայտի կարգավիճակը

Այնուհետև դեպի ներքև՝

Թարթող երեք մեծ սլայդներ

Սլայդների վրա գրվող տեքստերը

Սլայդ 1. Եթե Դուք աշխատող եք և գործատուն խախտել է Ձեր աշխատանքային իրավունքները, ապա սա բացառիկ հնարավորություն է դեպքի վերաբերյալ ներկայացնել գաղտնի հաղորդում:

Սլայդ 2. Եթե ցանկանում եք իրազեկված լինել աշխատանքային ոլորտում հաճախակի բնույթ կրող օրենսդրական ակտերի վերջին փոփոխություններից, ապա այս հարթակը հենց Ձեզ համար է:

Սլայդ 3. Եթե Դուք աշխատող եք և տեղյակ եք աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրներին, ապա ներկայացրեք այդ խնդիրները՝միանալով մեր կողմից ոլորտային փաստարկված բարեփոխումներ իրականացմանը:

Այնուհետև դեպի ներքև՝

Մեր առաքելությունը

Աշխատանքային ոլորտի զարգացման հարցում խիստ կարևոր է աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցը, դրա ապահովմանը ուղղված բարենպաստ օրենսդրությունն ու վարչարարությունը: Մենք ցանկանում ենք, որ այս առումով Հայաստանի Հանրապետությունը առաջատար երկիր լինի: Մեր թիմը պատրաստակամ է լսել Ձեր կողմից բարձրաձայնված աշխատանքային իրավունքների խախտումներն և աջակցել Ձեզ՝ դրանց լուծման հարցում: Բացի այդ, մենք կապահովենք Ձեր կողմից ներկայացված աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրների ընթացքը, դրանց հիման վրա կիրականացնենք ոլորտի փաստարկված բարեփոխումներ և կլուսաբանենք ոլորտի զարգացումները:

Այնուհետև դեպի ներքև՝

Նույն գծի վրա ձախից աջ չորս ուղերձներ.

- **Անանունություն և գաղտնիություն**

Դուք իրավունք ունեք Ձեր իրավունքների խախտումների վերաբերյալ անանուն կերպով հայտեր ներկայացնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվող աշխատանքային իրավունքների պաշտպանության էլեկտրոնային հարթակ: Բացի այդ, գործում են հավելյալ երաշխիքներ, այն է՝ եթե Դուք օգտվում եք Tor ինտերնետ բրաուզերից հայտ ներկայացնելու համար, ապա Ձեր տրամադրած տեղեկատվությունը կկոդավորվի, և Ձեր համակարգչի IP հասցեն չի բացահայտվի: Հետևաբար, ոչ ոք չի կարողանա պարզել ձեր ինքնությունը:

Անկախ այն հանգամանքից, թե Դուք ընտրել եք Tor ինտերնետ բրաուզերով, թե ստանդարտ ինտերներ բրաուզերով անանուն հայտ ներկայացնելու տարբերակը, մեր աշխատողները կպահպանեն Ձեր կողմից ներկայացված հայտի գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեր կողմից ներկայացված հայտը կներառի քրեորեն հետապնդելի արարքներ:

- **Արագ արձագանք**

Ձեր հայտը մեր կայքում ներկայացնելուց հետո Ձեր տրամադրած տեղեկատվությունը կուսումնասիրվի մեր աշխատողի կողմից, ով երկու աշխատանքային օրվա ընթացքում կպատասխանի Ձեզ՝ Ձեր կողմից բարձրացված հարցի լուծման նպատակով:

- **Փաստարկված բարեփոխումներ**

Աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ Ձեր կողմից տրամադրված տեղեկությունը կարող է օժանդակել մեզ հատկորոշելու աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում փաստարկված բարեփոխումներ և նվազեցնելու բյուրոկրատական քաշքշուկները:

- **Իրազեկվածություն**

Կարող եք ծանոթանալ աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի վերջին նորություններին, օրինակ՝ օրենսդրական փոփոխություններին և այլն: Բացի այդ, կարող եք իրազեկված լինել աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող տարաբնույթ միջոցառումների և այլնի մասին:

Այնուհետև դեպի ներքև՝

Վիճակագրություն

Սույն բաժնում ամսական, եռամսյա, վեցամսյա և տարեկան կտրվածքով ներկայացվում են հարթակի միջոցով ստացված հայտերի քանակը՝ ըստ հանրային և մասնավոր հատվածների, գործունեության ոլորտի, ըստ գործունեության վայրի և այլ չափանիշների:

Վիճակագրությունը տեղեկատվություն է պարունակում նաև, թե ներկայացված հայտերից որքան տոկոսով է վարչական վարույթ է հարուցվել և վարչարարություն իրականացվել, որքան տոկոսն է ներկայացվել իրավապահ մարմիններին և որքան տոկոսով գործերով դրական արդյունքներ ստացվել:

Բացի այդ, նշվում է, թե որքան օրենսդրական փոփոխություններ են ձեռնարկվել սույն հարթակի միջոցով ստացված տեղեկատվության շնորհիվ՝ խնդիրների, ռիսկերի վերհանման և առաջարկությունների ներկայացման միջոցով:

Այնուհետև դեպի ներքև՝

Նորություններ

Սույն բաժնում առաջարկում ենք ծանոթանալ աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացրած մեր գործունեությանը և դրանց լուսաբանումներին, փաստարկված բարեփոխումներ հատկորոշելու, օրենսդրական փոփոխություններին:

Այնուհետև դեպի ներքև՝

5. Հաջողության պատմություններ

Սույն բաժնում ներկայացվելու են հարթակի և մեր աշխատողների օժանդակությամբ հաջողությամբ հանգուցալուծված գործերը, ինչի արդյունքում վերականգնվել են աշխատողի խախտված աշխատանքային իրավունքները և կատարվել են փաստրկված օրենսդրական կամ այլ բարեփոխումներ: Բոլոր հաջողության պատմություններում հերոսների անունները կփոխարինվեն այլ անուններով, և կպահպանվեն նրանց գաղտնիությունը: Հերոսների ինքնությունը կբացահայտվի միայն իրենց ցանկությամբ:

Ներքևի հատված.

Գլխավոր Հարթակի մասին ՀՏՀ Նորություններ Հաջողության պատմություններ Հետադարձ կապ	Հարթակը պատրաստվել է «COVID-19 և կայունություն Հայաստանում. Մեղմացնելով սոցիալ-տնտեսական ազդեցությունը խոցելի մարդկանց և համայնքների վրա, #00122446» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ: Հարթակի մեթոդաբանության հեղինակային իրավունքը պատկանում է Իրավաբանների հայկական ասոցիացիային:	Հարթակի սոցիալական էջերի հղումներ	Հարթակի ներսում որոնման հնարավորություն	Հասցե՝ --------- Հեռախոսահամար՝ ---------- Էլ. փոստի հասցե՝ ---------	Դեպի Գլխավոր էջի վերևի հատված տանող կոճակ՝ սլաքով

Ամենաներքևի հատված.

Օգտագործման պայմաններ	Գաղտնիության քաղաքականություն	Disclaimer/Վերապահում	Ինչպես թաքցնել ձեր սարքի IP (հաղորդակարգի) հասցեն

2. Հարթակի մասին

Աշխատողների իրավունքների պաշտպանության EmployeeProtect.am առցանց հարթակի հիմնական նպատակն է. ուժեղացնել ՀՀ-ում աշխատանքային իրավունքների պաշտպանության համակարգը:

Հարթակի խնդիրներն են.

- գրանցել, ընդունել, քննել աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ աշխատողների կողմից ներկայացված անանուն հայտերը և ապահովել դրանց ընթացքը,
- աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ աշխատողների կողմից ներկայացված անանուն տեղեկությունների հիման վրա հատկորոշել և իրականացնել փաստարկված բարեփոխումներ,
- աշխատողներին իրազեկել աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի վերջին նորությունների մասին:

Աշխատողների իրավունքների պաշտպանության EmployeeProtect.am առցանց հարթակը գործարկվում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից:

Աշխատողների իրավունքների պաշտպանության EmployeeProtect.am առցանց հարթակը պատրաստվել է «COVID-19 և կայունություն Հայաստանում. Մեղմացնելով սոցիալ-տնտեսական ազդեցությունը խոցելի մարդկանց և համայնքների վրա, #00122446» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

3. ՀՏՀ

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում սույն հարթակը (կայքը):

Սույն հարթակը (կայքը) աշխատանքային ոլորտում ծագած խնդիրներին կամ առերևույթ իրավախախտումներին արագ արձագանքելու և աշխատանքային իրավունքները պաշտպանելու առցանց հարթակ է: Այստեղ ապահովված է ներկայացված հայտերի պաշտպանության բարձր մակարդակ: Ծրագրերի համադրությունը կոդիֆիկացնում է ներկայացված տեղեկատվությունը և հետևաբար պաշտպանում է այն կողմնակի միջամտությունից: Հայտ ներկայացնողները կարող են անանուն հանդես գալ և հաղորդել աշխատանքային իրավունքի ոլորտում իրենց հանդիպած խնդիրները և առերևույթ իրավախախտումները:

Հարթակը պատրաստվել է «COVID-19 և կայունություն Հայաստանում. Մեղմացնելով սոցիալ-տնտեսական ազդեցությունը խոցելի մարդկանց և համայնքների վրա, #00122446» ծրագրի

շրջանակներում, որն իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ: Հարթակի մեթոդաբանության հեղինակային իրավունքը պատկանում է Իրավաբանների հայկական ասոցիացիային: Հարթակը գործարկում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

2. Ո՞վ կարող է ներկայացնել հայտ:

Հայտ կարող է ներկայացնել յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման, մասնավոր ընկերությունների և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք, ովքեր աշխատանքային ոլորտում հանդիպել են խնդիրների Հայաստանի Հանրապետության տարածքում կամ խնդիրը կապված է աշխատանքային ոլորտում ՀՀ իրավասու մարմինների գործունեության հետ:

3. Ե՞րբ և ինչպե՞ս կարող եմ ներկայացնել հայտ: Արդյո՞ք առկա է հայտ ներկայացնելու վերջնաժամկետ:

Խորհուրդ է տրվում հայտը ներկայացնել անմիջապես՝ ծագած խնդրի պահին: Եթե դա հնարավոր չէ, ապա հնարավորինս շուտ: Այնուամենայնիվ, հարկավոր է ուշադրություն դարձնել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներին:
Հայտերը կարող են ներկայացնել այստեղ: (հիպեր հղում)

4. Ինչ հարցերո՞վ կարող եմ ներկայացնել հայտ:

Աշխատանքային ոլորտում ծագած առերևույթ իրավախախտումների, խնդիրների և այլ հարցերի դեպքում: Ընդ որում, հայտը հնարավոր է ներկայացնել ինչպես անմիջապես դիմողին առնչված խնդրի կամ առերևույթ իրավախախտման վերաբերյալ, այնպես էլ երրորդ անձանց կողմից աշխատանքային իրավունքի ոլորտում թույլ տված խնդիրների կամ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ:

5. Ինչ հարցերո՞վ չեմ կարող ներկայացնել հայտ:

Դուք չեք կարող ներկայացնել հայտ, եթե Ձեր հայտը չի առնչվում աշխատանքային ոլորտին: Այս դեպքում հայտը մնում է առանց քննության:

6. Ո՞ր տվյալներն են պարտադիր հայտ ներկայացնելու համար:

Հայտ ներկայացնելու համար պարտադիր տվյալներն են տեղեկատվություն այն մարմնի կամ կազմակերպության մասին, ում հետ հարաբերություններում ծագել է խնդիր, մարմնի կամ կազմակերպության գործունեության վայրի՝ ըստ մարզի և ըստ քաղաքի, խնդրի բովանդակության, դեպքի նկարագրության, խնդրի առաջացման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն: Վերոնշյալ տեղեկատվության լրացումը բավարար է հայտը ավարտելու և ներկայացնելու համար

7. Ո՞ր տվյալները պարտադիր չեն հայտ ներկայացնելու համար, սակայն կարող եմ ներկայացնել:

Հայտ ներկայացնելու համար ոչ պարտադիր տվյալներն են առավել մանրամասն տեղեկությունների ներկայացումը ծագած խնդրի ժամի, վայրի մասին, այն մասին, թե ինչպե՞ս է հայտ ներկայացնող անձը տեղեկացել խնդրի մասին, պաշտոնատար անձի անվան և պաշտոնի վերաբերյալ: Հնարավոր է նաև կցել խնդիրն փաստաթղթեր, լուսանկարներ և այլ ապացույցներ: Բացի այդ, հնարավոր է նաև լրացնել անձնական տվյալները և ներկայացնել հայտը, եթե չեք ցանկանում մնալ անանուն:

8. Արդյո՞ք պարտադիր է ապացույցներ ներկայացնել:

Խնդրի կամ առերևույթ իրավախախտումը հավաստող փաստաթղթեր, լուսանկարներ և այլ ապացույցներ ներկայացնելը պարտադիր չէ, սակայն խրախուսվում է, քանի որ այն կնպաստի Ձեր հաղորդման լուծմանը: Ապացույցների առավելագույն ծավալը ներկայացնելու մանրամասների մասին կարող եք ծանոթանալ այստեղ: (հիպեր հղում)

9. Արդյո՞ք ես փաստաբանի կարիք ունեմ:

Ոչ:

10. Արդյո՞ք հայտ ներկայացնելը անվճար է:

Այո: Tor ինտերնետ-բրաուզերը ևս անվճար է և հասանելի յուրաքանչյուրին:

11. Արդյո՞ք ապահովվում է հայտ ներկայացված անձի գաղտնիությունը:

Այո, հայտ ներկայացված անձի գաղտնիությունը պահպանվում է: Սակայն, առկա են գաղտնիության պահպանման երկու մակարդակներ: 2 տարբերակով էլ հայտ ներկայացնելու դեպքում հնարավորություն է տրվում մնալ անանուն:

Առաջին մակարդակ. Գաղտնիության առավել պաշտպանություն ստանալու նպատակով խորհուրդ է տրվում հայտը ներկայացնել Tor ինտերնետ-բրաուզերի միջոցով, և ոչ թե ստանդարտ ինտերնետ-բրաուզերով: Tor ինտերնետ-բրաուզերը ստեղծված է երրորդ անձանցից պաշտպանության նպատակով, այն քողարկում է Ձեր IP (Internet Protocol) հասցեն և կոդավորում է տվյալները: Tor Ինտերնետ-բրաուզերը անվճար է և հասանելի յուրաքանչյուրին:

Երկրորդ մակարդակ. Ստանդարտ ինտերնետ-բրաուզերով հայտը ներկայացնելու դեպքում գաղտնիությունը ևս պահպանվում է, եթե հայտը ներկայացնելիս Դուք ընտրում եք անանուն մնալու տարբերակը: Սակայն այս պարագայում տվյալների կոդավորում տեղի չի ունենում, հետևաբար տեղեկատվությունը պաշտպանված չէ, օրինակ, կիբեր հարձակումների դեպքում: Ուսիտև, մենք խորհուրդ են տալիս օգտվել Tor ինտերնետ-բրաուզերից:

Ներբեռնել Tor ինտերնետ-բրաուզեր: (հիպեր հղում)

12. Ի՞նչ են իրենցից ներկայացնում Tor ինտերնետ-բրաուզերը և ստանդարտ ինտերնետ-բրաուզերը:

Tor ինտերնետ-բրաուզերը ստեղծված է երրորդ անձանցից պաշտպանության նպատակով: Tor-ը քողարկում է Ձեր IP (Internet Protocol) հասցեն և կոդավորում է տվյալները: Tor ինտերնետ-բրաուզերը անվճար է և հասանելի յուրաքանչյուրին: Ստանդարտ ինտերնետ բրաուզերը ցանկացած որոնողական համակարգ է, որտեղ IP (Internet Protocol) հասցեն չի քողարկվում, և տվյալները չեն կոդավորվում, օրինակ՝ Google Chrome, Internet Explorer, Opera, Mozilla Firefox.

Ներբեռնել Tor ինտերնետ-բրաուզեր: (հիպեր հղում)

13. Ո՞ր տարբերակն է ավելի նախընտրելի. դիմել անանո՞ւն, թե՞ հայտնել ինքնությունը:

Երկու տարբերակներն էլ ունեն իրենց առավելությունները: Անանուն դիմելու առավելությունը կայանում է նրանում, որ ապահովվում է գաղտնիությունը, հետևաբար տվյալ անձի համար հայտի ներկայացումը չի կարող ունենալ որևէ բացասական իրավական հետևանքներ:

Միևնույն ժամանակ, անունը հայտնելը խրախուսվում է, քանի որ այն կնպաստի ներկայացրած խնդրի լուծմանը, մասնավորապես՝ հնարավոր կլինի անմիջապես նույնականացնել դիմողին և նրա առնչությամբ ծագած խնդիրը, ինչպեսև պարզել այն անձին և կազմակերպությանը, ում հետ դիմողը գտնվում է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ։

14. Ո՞ր դեպքերում կարող է բացահայտվել հայտ ներկայացրած անձի ինքնությունը։

Հայտ ներկայացված անձի ինքնությունը կարող է բացահայտվել հետևյալ դեպքերում.

- Եթե անձը կամովին ներկայացրել է անձնական տվյալներ։
- Եթե անձը կամովին ներկայացրել է այնպիսի մանրամասն տվյալներ, որոնք ողջամտության սահմաններում կարող էր տիրապետել միայն ինքը, օրինակ նշել է կոնկրետ ժամը և խախտում թույլ տված անձի անունը, այդ դեպքերում տրամաբանական է, որ հիշյալ անձը կարող է նույնականացնել հայտը և տվյալ օրը դիմողի հետ ծագած խնդիրը։
- Եթե անձը քննարկել է իր կողմից հայտնած տեղեկատվությունը ընտանիքի անդամների, ընկերների, գործընկերների կամ այլոց հետ, ապա առկա է ռիսկ, որ վերջիններս կարող են տարածել տվյալ տեղեկատվությունը և այն հանգամանքը, որ անձը հայտ է ներկայացրել։

15. Կարելի՞ է քննարկել հայտնած տեղեկատվությունը և հայտ ներկայացնելու փաստը ընտանիքի անդամների, ընկերների, գործընկերների կամ այլոց հետ։

Հայտի ներկայացումը չի բացառում երրորդ անձանց հետ քննարկումը, սակայն խորհուրդ չի տրվում, հատկապես այն դեպքում, եթե հայտը անանուն է ներկայացված, քանի որ երրորդ անձինք կարող են տարածել տվյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ հայտ ներկայացնելու փաստը։

16. Ո՞ր դեպքերում է ներկայացված հայտը փոխանցվելու այլ մարմինների։

Քրեորեն հետապնդելի արարք չպարունակող հայտը և դրանում առկա տեղեկատվությունը կփոխանցվի համապատասխան պետական /տեղական ինքնակառավարման/ մարմնի ղեկավարին/վերադասին/, եթե դրանց քննումը դուրս է ՀՀ առողջապահական և աշխատանքի

տեսչական մարմնի գործառույթների շրջանակից։ Մնացած բոլոր դեպքերում հայտի քննությունը իրականացնում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը։

17. Արդյո՞ք հայտ ներկայացրած անձը պետք է մասնակցի հայտի քննությանը:

Այն դեպքում, երբ հայտը ներկայացվել է ստանդարտ ինտերնետ բրաուզերի միջոցով, և հայտատուի ինքնությունը բացահայտված է, ապա քրեական գործ հարուցվելու դեպքում վերջինս կարող է տվյալ գործով կանչվել, օրինակ որպես վկա՝ օրենքով նախատեսված կարգով:
Հայտը ստանդարտ ինտերնետ բրաուզերի միջոցով ներկայացվելու դեպքում հայտատուի հետ կարող են հետադարձ կապ հաստատել նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հրավիրել քննարկման։

18. Արդյո՞ք հայտատուի կողմից ոչ ճշգրիտ կամ թերի տեղեկատվություն ներկայացումը կորակվի որպես սուտ մատնություն:

Այն դեպքում, երբ հայտում ներկայացրած տեղեկությունը ճշգրիտ չէ և/կամ թերի է, ու իրենից չի ներկայացնում կեղծ տեղեկություններ (տե՛ս հարց 20), ապա հայտատուն չի ենթարկվի պատասխանատվության սուտ մատնության համար: Միաժամանակ, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչները կարող են հետադարձ կապ հաստատել հայտատուի հետ և խնդրել տրամադրել ամբողջական տեղեկատվություն:
Նշենք նաև, որ համաձայն ազդարարման վերաբերյալ օրենսդրության՝ եթե հայտ ներկայացնողը մեղադրանք է ներկայացնում անկեղծորեն, նա պաշտպանված է անվանարկման գործընթացից, ինչպես նաև պաշտպանված է իր գործատուի կողմից ցուցաբերվող անարդար վերաբերմունքից (այն է՝ եթե ընկերության կամ պետական կազմակերպության աշխատողը սխալ գործելակերպի վերաբերյալ մեղադրանք է ներկայացնում):

19. Արդյո՞ք կեղծ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում հայտատուն կենթարկվի պատասխանատվության սուտ մատնության համար:

Եթե հայտատուն գիտակցել է, որ իր կողմից տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, ապա վերջինս կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության սուտ մատնության համար: Միաժամանակ, սա կիրառելի կլինի այն դեպքում, եթե հայտը ներկայացվի ստանդարտ

ինտերնետ բրաուզերի միջոցով, որը հնարավորություն կտա բացահայտելու հայտատուի ինքնությունը:

20. Ո՞վ է ստանում հայտատուի կողմից ներկայացված հայտը:

Հայտատուի տրամադրած տեղեկատվությունը քննության կառնվի ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից:

21. Ինչպե՞ս է օգտագործվելու ներկայացված հայտը:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը ներկայացված հայտը քննության առնելուց հետո խախտումներ արձանագրելու դեպքում՝ ՀՀ օրենսդրության և մարմնի գործառույթների շրջանակներում կձեռնարկի միջոցներ դրանք լուծման նպատակով:
Եթե ներկայացված տեղեկատվությունը իր մեջ պարունակում է քրեորեն հետապնդելի արարք, ապա հայտը կներկայացվի իրավապահ մարմիններին:

22. Ինչպե՞ս ստուգել ներկայացված հայտի կարգավիճակը:

Հայտը ներկայացնելուց հետո, հայտատուն կստանա ծածկագիր, որը պետք է օգտագործի հայտի կարգավիճակը ստուգելու նպատակով: Հորդորում ենք գաղտնի պահել այդ ծածկագիրը: Հայտի կարգավիճակը ստուգելու նպատակով պետք է այցելել այստեղ (հիպեր հղում) և մուտքագրել ծածկագիրը:

23. Հայտը ներկայացնելուց որքա՞ն ժամանակ անց կարող եմ ստուգել հայտի կարգավիճակը:

Հայտը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն կարող է ստուգել հայտի կարգավիճակը, որով կպարզվի, արդյո՞ք այն մերժվել է, թե՝ ոչ: Հետագա տեղեկատվություն ստանալու նպատակով խորհուրդ է տրվում պարբերաբար այն ստուգել, քանի որ կախված գործի բնույթից և բարդության աստիճանից, կարող են լինել տարբեր ժամկետներ:

24. Արդյո՞ք հայտատուի հետ ապահովվելու է հետադարձ կապ:

Հայտը ներկայացնելուց հետո, հայտատուն կստանա ծածկագիր, որը պետք է օգտագործի հայտի կարգավիճակը ստուգելու նպատակով: Հորդորում ենք գաղտնի պահել այդ ծածկագիրը: Հայտի կարգավիճակը ստուգելու նպատակով պետք է այցելել այստեղ (հիպեղ հղում) և մուտքագրել ծածկագիրը:

Սակայն, հարկ է նաև նկատի ունենալ, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչները հայտի վերաբերյալ հարցերի առաջացման դեպքում կհաստատեն նաև ակտիվ բնույթ կրող հետադարձ կապ և «ստուգել հայտի կարգավիճակը» բաժնում հայտատուին կուղղվեն հարցեր:

25. Արդյո՞ք հետադարձ կապ ապահովելիս շարունակվում է պահպանվել հայտատուի անձի գաղտնիությունը:

Այո:

26. Ներկայացված հայտի ընդունման դեպքում արդյո՞ք հայտատուն կտեղեկացվի հայտի հետագա կարգավիճակի մասին:

Այո, հայտատուին պարբերաբար կներկայացվի տեղեկատվություն այն մասին, թե որ փուլում է գտնվում ներկայացված հայտը, մասնավորապես՝ քննվո՞ւմ է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, թե՞ այլ մարմնի կողմից, իրավասու մարմինը տվյալ գործով դրական, թե՞ բացասական պատասխանել է ներկայացրել: Քրեորեն հետապնդելի արարք պարունակելու դեպքում՝ ո՞ր իրավապահ մարմնին է ներկայացվել և այլն:

27. Եթե հայտատուն ցանկանում է հավելյալ տեղեկատվություն տրամադրել, օրինակ ձեռք է բերել նոր ապացույց, ինչպե՞ս կարող է դա անել:

Նոր ապացույց ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է լրացնել հայտը:

Եթե հայտը ներկայացնելիս հայտատուն լրացրել է միայն պարտադիր բնույթի տեղեկատվությունը և ցանկանում է ավելացնել լրացուցիչ տեղեկատվություն, ապա այդ հնարավորությունը կունենա հայտի կարգավիճակը ստուգելիս՝ ծածկագրով մուտք գործելու ժամանակ: Սակայն, եթե անցել է տեղեկատվության պահպանման 120 օրը, ապա անհրաժեշտ է կրկին հայտ ներկայացնել՝ ընդհանուր ընթացակարգով:

28. Ի՞նչ է լինում հայտնած տեղեկության հետ, եթե իրավասու մարմինները միջոցներ չի ձեռնարկում դրա վերաբերյալ:

Այն դեպքում, երբ ներկայացրած տեղեկատվության վերաբերյալ իրավասու մարմինները միջոցներ չեն ձեռնարկում, հայտատուն իրավունք ունի բողոքարկելու իրավասու մարմինների գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով: Վերադասության կարգով բողոքարկման դեպքում կայացրած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, հայտատուն վերադաս մարմնի որոշումը կարող է բողոքարկել ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ մասնագիտացված վարչական դատարան: Դատական ատյանի և հայցապահանջի որոշումը կախված է կոնկրետ իրավահարաբերության բնույթից:

29. Որքա՞ն ժամանակ է պահպանվում ներկայացված տեղեկատվությունը:

Հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվությունը դրանք ներկայացնելուց 120 օր հետո ավտոմատ կերպով ջնջվում է հարթակից (կայքից):

4. Նորություններ

Այս բաժնում կլուսաբանվեն աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացրած գործունեությունը, դրանց լուսաբանումները, փաստարկված բարեփոխումներն ու օրենսդրական փոփոխությունները:

5. Հաջողության պատմություններ

Այս բաժնում կհրապարակվեն հարթակի և մեր աշխատողների օժանդակությամբ հաջողությամբ հանգուցալուծված գործերը, ինչի արդյունքում վերականգնվել են աշխատողի խախտված աշխատանքային իրավունքները և կատարվել են փաստարկված օրենսդրական կամ այլ բարեփոխումներ: Բոլոր հաջողության պատմություններում հերոսների անունները կփոխարինվեն այլ անուններով, և կպահպանվեն նրանց գաղտնիությունը: Հերոսների ինքնությունը կբացահայտվի միայն իրենց ցանկությամբ:

6. Հետադարձ կապ

Հեռախոս

Ընդունարան՝(+374 10) 650 553

Իրազեկման բաժին՝(+374 10) 650 305

Թեժ գիծ՝ 81-07

Էլ. փոստ՝ info@hlib.am

Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթի — ուրբաթ, 9:00-18:00

Հետադարձ կապ

Անուն, Ազգանուն	Էլեկտրոնային հասցե
Թեմա	
Հաղորդագրություն	
Ես ռոբոտ չեմ	Ուղարկել

7. Ներկայացնել հայտ

Հայտի ներկայացման ստանդարտները ներկայացված է սույն փաստաթղթի Հայտի ներկայացման տեխնիկական կառուցակարգ հատվածում:

8. Ստուգել հայտի կարգավիճակը

Հայտի ստուգման կարգավիճակի ստանդարտները ներկայացված է սույն փաստաթղթի Հայտի կարգավիճակի վերաբերյալ տեխնիկական կառուցակարգ հատվածում:

10. Ավարտական դրույթներ

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն իրենց կողմից կատարած նմանատիպ աշխատանքների առնվազն 1 օրինակ:

Սույն տեխնիկական պայմանները, կողմերի համաձայնությամբ, աշխատանքների ընթացքում կարող են փոփոխվել:

Հաղթող ճանաչվելուց և համապատասխան աշխատանքներն իրականացնելու պայմանագիր կնքելուց հարթակ ամբողջությամբ պետք է հանձնվի պատվիրատուին՝ ըստ սույն տեխնիկական առաջադրանքի ժամանակացույցի:

Հարթակը հանձնելուց կատարողը պետք է կատարի բոլոր կարգավորումները, ինչպես նաև՝ պատվիրատուին տրամադրի հարթակի ամբողջական ֆայլային համակարգը, բազաները, դրանց հետ կապված գաղտնաբառերը: